




**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Գլխավոր տնօրեն



Կ. Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
արտադրատնտեսական գործունեության վերլուծություն

02.11.2015թ.
10:30

Ներկաներ՝

Կ. Հարությունյան	Գլխավոր տնօրեն
Ա. Թոխունց	Գլխավոր տնօրենի տեղակալ, Իրացման տնօրեն
Դ. Գրիգորյան	Գլխավոր տնօրենի տեղակալ, Տեխնիկական տնօրեն
	Գլխավոր տնօրենի տեղակալ, Անվտանգության և վերահսկողության տնօրեն
Ա. Արշակյան	Էկոնոմիկայի և ֆինանսների տնօրենի պաշտոնակատար, Էկոնոմիկայի և ֆինանսների վարչության պետ
Ռ. Ասկարյան	Խոշոր սպառողների սպասարկման տնօրինության տնօրեն
Ս. Պողոսյան	Գլխավոր տնօրենի տեղակալ, Ընդհանուր հարցերով տնօրեն
Հ. Գասպարյան	Ընդհանուր հարցերով տնօրենի տեղակալ
Գ. Բաղայյան	Ներքին վերահսկողության վարչության պետ
Ն. Ադամյան	Գլխավոր հաշվապահ
Վ. Բուռնազյան	Անվտանգության և վերահսկողության տնօրենի տեղակալ
Վ. Գսպոյան	Տեղեկատվական տեխնոլոգիաների ղեկավարամենտի պետ
Վ. Գրիգորյան	Գլխավոր տնօրենի հատուկ հարցերով խորհրդական
Գ. Մարգարյան	Գլխավոր տնօրենի խորհրդական ռազմավարական զարգացման գծով
Ն. Սարջանյան	Աշխատակազմի ղեկավար, Հասարակության և ՋԼՄ հետ

	կապերի դեպարտամենտի պետ
Դ. Ղազինյան	“Կենտրոն” տարածքային համակարգման տնօրինության տնօրեն
Կ. Մնացականյան	“Գեղամա” մասնաձյուղի տնօրեն
Հ. Հովհաննիսյան	“Արաքս” մասնաձյուղի տնօրեն
Ն. Ղալթախչյան	“Աղստև” մասնաձյուղի տնօրեն
Գ. Սարգսյան	“Դեբեդ” մասնաձյուղի տնօրեն
Գ. Ֆարգադյան	“Ղարս” մասնաձյուղի տնօրեն
Ա. Գրիգորյան	“Տատև” մասնաձյուղի տնօրեն

ՕՐԱԿԱՐԳ

1. Օպերատիվ իրադրություն
2. Ընթացիկ գործունեություն
3. Ընթացիկ շաբաթվա ծրագրեր

ԼՍԵՑԻՆ՝

Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանին.

- Ներկայումս Ընկերությունում անց է կացվում նոր սկզբունքներով առաջին գույքագրումը:
- Ընկերության “Գեղամա” մասնաձյուղի “Արգնի” ՇԷՑ-ի 4 աշխատակիցներ հեռացվել են աշխատանքից էլեկտրաէներգիայի քանակի հաշվառման ոլորտում թույլ տված խախտումների համար:
- Մոտ ապագայում Ընկերությունում նախատեսվում է իրականացնել մի շարք ռազմավարական ծրագրեր (Ընկերության ֆինանսական առողջացման ծրագրի և բիզնես-պլանի մշակում, միասնական սպասարկման կենտրոնների և փոքր սպասարկման կետերի ստեղծում և այլն):

Գլխավոր տնօրենի տեղակալ, Տեխնիկական տնօրեն Դ. Գրիգորյանին.

- Օպերատիվ իրավիճակը ընդհանուր առմամբ կայուն է, անջատումները և վթարները վերականգնվել են առանց սահնամնված ժամկետների խախտման:
- Մասնաձյուղերի տնօրեններին. ավելի սերտ համագործակցել Ընկերության գլխամասային գրասենյակի հետ ուրվականների ճշգրտման գործում:

- Մասնաճյուղերում USU աշխատանքների կատարման տեմպերը չեն բավարարում առաջադրված ժամկետներին:

Գլխավոր տնօրենի տեղակալ, Անվտանգության և վերահսկողության տնօրենին.

- Անվտանգության և վերահսկողության տնօրինության կողմից կատարված ստուգումների արդյունքում արձանագրվել են բազմաթիվ խախտումներ, մասնավորապես “Գեղամա” և “Արաքս” մասնաճյուղերում, սակայն անհրաժեշտ է շեշտել, որ անգամ զգուշացումներից հետո ձախ լարանցումները և այլ խախտումները չեն վերացվել:

Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ՝ Վ. Գսպոյանին.

- Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումներին ուղարկվել է ծրագրային նոր վարկած բնակչության մասով սուբսիդավորման կարգի փոփոխման հետ կապված և անհրաժեշտ է սեղմ ժամկետում ներկայացնել առաջարկություններ ծրագրային փոփոխությունների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ընկերության մասնաճյուղերի տնօրեններին և Ընդհանուր հարցերով տնօրեն Ս. Պողոսյանին՝ 5 (հինգ) օրվա ընթացքում ավարտել Ընկերության կոնտրազենտների հետ կնքված պայմանագրերի ստուգման և վերանայման գործընթացը:
2. Ընդհանուր հարցերով տնօրեն Ս. Պողոսյանին՝ 3 (երեք) օրվա ընթացքում կազմակերպել բոլոր անհրաժեշտ մատակարարումները ձմռան ժամանակաշրջանի նախապատրաստման, անվտանգության պաշտպանիչ միջոցների և USU համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների մասով:

Կատարող՝ Դ. Մանուկյան

Հեռ. 59-12-24